


CA 32-1
3

ՍԵՄԻ Կ

ՆՈՒՆԻԿԻ ՅԵՐԱԶԸ



ԳԼԵՅՈՒԹԵԿԱ
ԻՆՏԵՐՆԱԿԱԼ
ԽՈՍԻՑՈՒՄ ԳԵՄԱՐ
Ակադեմիա Ռոսս
ՍՍՏՐ

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍՈՒՐՅԱՆԻՆՈՎԻ


891.995
Ա-38

ՊԵՏՅՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

Նունիկը մի որ
ողանավ տեսավ,
ու հորն այդ մասին,
հարց ու փորձ արավ:




Հայրիկը պատմեց,
վոր այդ նազն ողում,
արծվի նման,
թռչում ե, ճախրում:
Վերցնում ե մարդիկ,
բեռ ու կապոցներ,
գիրք ու լրագիր,
հետն ել նամակներ:
— Իսկ մարդիկ, պապան,
բա չեն վախենում,—
հարցրեց հորը,
Նունիկը վերջում,—
այդ նավից հանկարծ,
ներքե ընկնեն,



56963-66

եղ պրծնում չ'կա,
իսկույն կմեռնեն:
— Ձեն ընկնի, բալիկ,—
ասաց աղջկան,—
այդ բաների դեմ,
միջոցներ ել կան.
Վորպեսզի լինեն
հանգիստ, ապահով,
իրենց կապում են
կաշե թոկերով,
ու յերբ իջնում են,
հասնում են գետնին,
բոլոր թոկերը,
քանդում են կրկին:
Յեվ այսպես շատ բան
Նունիկը լսեց.
ընկավ մտքի հետ,
եղ հարց չտվեց:



Քնեց նունիկը
խոր, հանգիստ քնով,
իր մահճակալում,
խաղաղ, անվրդով:
Ու յերազում նա
տեսավ ողանավ՝
պատիկ, պսպղուն,
գեղեցիկ ու լավ...
Ողաշուն նույնպես
փոքրիկ՝ իր նման
շատ-շատ վոր լինի,
յոթն-ութ տարեկան:
— Կուզե՞ս, վոր թռչես,
ասաց նունիկին, —
յեկ նստեցնեմ
քեզ ողանավին.
տանեմ Յերևան,
Թիֆլիս ու Բագու,
ապա յետ բերեմ,
Մեղրի, Ղամարլու:




Կամ յեթե կուզես,
թռչենք մենք Մոսկվա,
նորությունները
դու տես այս տարվա:
— Հա, Մոսկվա կուզեմ,
նունիկը ասավ, —
րնկեր Լենինին
մի տեսնեմ յես լավ:
Հետո յեր... գիտե՞ս...
մի... տեսնել կուզեմ...

մի Մոսկվա հասնենք,
հետո յես կասեմ...
Ու մեր նունիկը
շափազանց հուզված,
նստեց ողանավ,
հույսերով տարված:



III

Թռան, գնացին,
անցան ձոր ու սար,
ողանալն ել շատ
արավ վեր ու վար:
Անցան Յերևան
ու Լենինական,
Լոռվա վրայով,
մտան Վրաստան:
Թիֆլիսը բարձրից
գեղեցիկ է շատ,
տները կարծես,
նախշեր են հատ, հատ
իռկ՝ վարար Գուռը՝
փայլուն, սպիտակ,
ու վառ Զազեսը՝
հագարակրակ:



Բն լեռնաշղթան
սիրուն կովկասի,
այնքան շքեղ է,
լեզվով շի ասվի: —
Սարերը բարձր,
վիթխարի, հսկա,
ձյունե գլխարկով,
ու միշտ արևկա.
մարմինը թաղած
բամբակ ամպերում,
իրենք վերևից
հսկում են, նայում:
Հասան Արմավիր,
միքի՛ վեր յեկան,
վոր բաներ վերցնեն
իրենց պետքական.
ու նորից թռան,
հասան Ռոստով,
ուզիդ գծով ել —
այնտեղից Խարկով:



վերջապես հասան
Մոսկվա իրիկվան.
քաղաքի վրա
նախ պտուղտ յեկան.—
հազար ու հազար
լամպեր ելեկտրյան,
Նունիկը յերբեք
չի տեսել այդքան:
Փոքրիկ ողաշուն
Մոսկվան լավ գիտեր.



Նունիկին մեկ-մեկ
ասում, պատմում եր:
—Ես ել Իլիչի
դամբարանը նոր,
մոտը կանգնում ե
պահակ ամեն որ.
կառուցված ե նա
գույն-գույն քարերից,
և ամեն մեկը
բերած մի տեղից:

— Հայաստանից է.
 ու նոր է յեկել,
 իմ ողանավով
 այսօր եմ բերել,—
 ասաց ողաչուն
 ու մեր Նունիկին
 ներկայացրեց
 կանգնած պահակին:
 — Ի, բարև՛, բարև՛,
 հարավի աղջիկ,
 սևաչյա, սիրուն,
 դու հոկտեմբերիկ,
 գնան, մուտեցիր,
 Մեծ Հենինին տես,
 յերբ վերադառնաս,
 ձերոնց կպատմես:
 Ասա բոլորին
 դու Հայաստանում,
 վոր մանուկներին
 նա շատ եր սիրում
 ու Կուք էլ նրան
 պիտի շատ սիրեք,



իր պատգամները
 անշեղ կատարեք:
 Մեկ էլ Նունիկը
 հանկարծ նկատեց,—
 զիմացի պատին
 հրավառ գրեր:
 Գրված է պատին՝
 «Սովորիր անվերջ
 վոր սոցիալիզմի
 կառուցող լինես»:
 Պատգամն եր դա մեր
 անմահ Հենինի,
 վոր թողել եր նա
 յերեխաներին:
 Նունիկի մտքում
 այդ գրերը հուր
 տպվեցին ասես,
 մեխվեցին ամուր:
 Պատգամն այդ իր դեմ
 հուրհուրում եր դեռ,
 բայց նա այլևս
 դամբարանում չեր:



«ՍՈՎՈՐԻՐ ԱՆՎԵՐՋ
 ՎՈՐ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
 ԿԱՌՈՒՅՈՂ ԼԻՆԵՍ »

ՀԱՍՏԱՏՎԱԿ
 ՀՍՍՌ-ԱՐՄ ՍՍՐ
 ԿՄ Ա ՄՅՇՈՒՅՈՒՄ
 ԿՄ Ա ՄՅՇՈՒՅՈՒՄ

Նա մանուկներին
 իր շուրջն հավաքել —
 պատմում էր նրանց,
 թե ինչ է տեսել:
 — Գիտե՞ք, ընկերներ,
 Հենինը պառկած...
 ու զարթնեց քնից,
 մնաց շվարած՝
 դարձյալ սենյակն իր,
 նույն, սովորական,
 չկա—վոչ Հենին,
 վոչ Մոսկվա, վոչ բան:



Բայց թե Նունիկը
 դեռ մինչև այսօր,
 հիշում է Մոսկվան,
 յերազը բոլոր,
 ժպիտը դեմքին
 պառկած Իլյիչին.
 ու պատգամը իր՝
 «Անվերջ սովորիր, —
 Սովորիր համառ,
 պայքարիր անվերջ,
 վոր սոցիալիզմի
 կառուցող լինես» —



«Ազգային գրադարան»



NL0405511

400060 400

12649



БИБЛИОТЕКА
 ИНСТИТУТА
 ВОСТОЧНОЙ АЗИИ
 Академии Наук
 СССР
 СЕМЬКА
СОН НУНИК
 ГИЗ. СССР АРМЯНЬ
 1 9 3 1

Համարակ. № 1715

Գրավոր. № 6557 (բ)

Վեր. պահպան. Գրադիր № 3180

Տրամ 5000